ԼՂԻՄ-Ի ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Սկսվել է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կյանքի նոր շաբաթը: Դրա առաջին օրը կրկին նշվել է գործադուլով, որն ընդգրկել է ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերը, բացառությամբ ագրարային հատվածի, բնակչության կենսապահովման ոլորտների, կապի ծառայության, ինչպես նաև առողջապահության և ժողովրդական կրթության:

Այսօր մարզային կենտրոնում ստեղծված իրադրության մասին Արմենպրեսի թղթակցին պատմեց կուսակցության քաղկոմի երկրորդ քարտուղար Հրանտ Մելքումյանը:

Երկաթուղային կայարանում կուտակվել են վագոններ, որոնցում ժողովրդատնտեսական բեռներ կան Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի, քաղաքային էլեկտրացանցի, Ղարաբաղի մետաքսի կոմբինատի, կահույքի ֆաբրիկայի, գյուղմեքենաների գործարանի համար, ասաց նա: Այդ ձեռնարկությունների աշխատավորները սկսել են վագոնների բեռնաթափումը: Այդ աշխատանքները կազմակերպելու գործում իրենց ջանքերն են գործադրել կուսակցական մարմինները, տնտեսական ղեկավարները: Մասամբ այդ կապակցությամբ սկսել է գործել բեռնատար ավտոտրանսպորտը: Բնակարանային գործարկվող օբյեկտներում, ներառյալ նաև տնտեսական եղանակով կառուցվող օբյեկտներում, աշխատանքային ռիթմը վերականգնելու համար մոբիլիզացվել են որոշ շինարարական բրիգադներ:

Հայտնի է, որ դպրոցների ավարտական դասարանները պարապմունքներին ձեռնամուխ են եղել գործադուլն ընկը ավելուց որոշ ժամանակ անց: Ինչ վերաբերում է մյուս դասարանների աշակերտներին, ապա նրանց համար պարապմունքները նախատեսված է շարունակել մինչև հունիսի 15-ը, որպեսզի նրանք կարողանան ավարտել ուսումնական ծրագիրը:

Քաղաքում իրադրությունը համեմատաբար հանգիստ է: Մարդիկ շահագրգիռ կերպով քննարկում են ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի ազգամիջյան հարաբերությունների հարցերի հանձնաժողովի վերջին նիստի արդյունքները, որը քննության առավ Լեռնային Ղարաբաղի իրավիճակը: Այստեղ կարծիքները շատ տարբեր են: Ստեփանակերտի աշխատավորները անհամբերությամբ սպասում են ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի աշխատանքին, որի հասցեով քաղխորհրդի վերջին նստաշրջանը հատուկ դիմում ընդունեց, խնդրելով քննարկել ԼՂԻՄ-ի պրոբլեմը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ